ԿԱՐԻՆԵ ԽՈՒԴԱԲԱՇՅԱՆ – ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտը և հայրենական երաժշտագիտությունը ծանր ու անդառնալի կորուստ կրեցին: Կյանքի 87-րդ տարում վախճանվեց Արվեստի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ինստիտուտի Ժողովրդական երաժշտության բաժնի երկարամյա վարիչ (1984–2005), ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Կարինե Խուդաբաշյան–Սարգսյանը:

Կ. Խուդաբաշյանը ծնվել է 1929 թ. հուլիսի 7-ին Թբիլիսիում, Ջալալօղլուց սերող կալվածատեր-ազնվականների տոհմի շառավիղ, ճարտարագետ Էմանուել Խուդաբաշյանի և դաշնակահարուհի Ռեգինա Եդիգարովայի ընտանիքում:

1952-ին Կ. Խուդաբաշյանը գերազանցությամբ ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի տեսական-կոմպոզիտորական ֆակուլտետը՝ պրոֆ. Գ. Տիգրանովի գիտական ղեկավարությամբ, և 1953-ից ուսումնառությունը շարունակել Լենինգրադի Ռիմսկի-Կորսակովի անվան պետական կոնսերվատորիայի, ապա՝ ՀԽՍՀ ԳԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտուրայում՝ պրոֆ. Ք. Քուշնարյանի ղեկավարությամբ:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի հետ կապվեցին երաժշտագետի կյանքի 55 տարիները. 1960-ին Կ. Խուդաբաշյանն աշխատանքի է անցել ինստիտուտում որպես կրտսեր գիտաշխատող, իսկ 1970-ին պաշտպանել «Բազմաձայնության զարգացման վաղ շրջանը հայ երաժշտության մեջ» ատենախոսություն՝ ստանալով արվեստագիտության թեկնածուի գիտական աստիճան: 1978-ին Կ. Խուդաբաշյանն ընտրվել է ավագ գիտաշխատողի պաշտոնում, իսկ 1984–2005-ին ղեկավարել ինստիտուտի Ժողովրդական երաժշտության բաժինը: 2005-ից Կ. Խուդաբաշյանը ինստիտուտի առաջատար գիտաշխատող էր: 1985-ից ինստիտուտի գիտական խորհրդի անդամ էր: Երկար տարիներ եղել է արվեստագիտության գծով գիտական աստիճանաշնորհման մասնագիտական խորհրդի անդամ:

1968-ից Կ. Խուդաբաշյանը ԽՍՀՄ կոմպոզիտորների, իսկ 1970-ից՝ Հայաստանի թատերական գործիչների միությունների անդամ էր: 1975–81-ին ղեկավարել է Հայաստանի կոմպոզիտորների միության երաժշտագիտական սեկցիայի աշխատանքները, 1979–98-ին՝ ընտրվել կոմպոզիտորների միության վարչության անդամ:

Ծանրակշիռ է Կ. Խուդաբաշյանի վաստակը հայ դասական և ժամանակակից կոմպոզիտորների ստեղծագործությունների, տեսական երաժշտագիտության հիմնահարցերի ուսումնասիրության գործում: Վաստակաշատ երաժշտագետն իր հեղինակավոր խոսքն է ասել ինչպես երաժշտության պատմության, այնպես էլ էթնոերաժշտագիտության և երաժշտական քննադատության ասպարեզում: Նրա 3 մենագրություններն ու ավելի քան 60 գիտական հոդվածները տպագրվել են Հայաստանում, Մոսկվայում, Լենինգրադում, Տաշքենդում, շուրջ 5 տասնյակի են հասնում ժամանակակից երաժշտական կյանքին նվիրված նրա հրապարակախոսական հոդվածները:

Կ. Խուդաբաշյանը մեծ հաջողությամբ համատեղել է գիտնական-հետազոտողի և գիտության կազմակերպչի աշխատանքները: Նրա կազմակերպած 30 էթնոգրաֆիկ գիտարշավների ընթացքում գրառվել են ժողովրդական և գործիքային նվագների 2000-ից ավելի նմուշներ, որոնց շնորհիվ Արվեստի ինստիտուտի Արամ Քոչարյանի անվան ձայնադարանի ֆոնդի նմուշների թիվը գերազանցեց 20000 միավորի սահմանը:

Դեռևս 1985-ին Արվեստի ինստիտուտում հիմնվեց «Հայ ավանդական երաժշտության» մատենաշարը. նախագծի հեղինակն ու գլխավոր խմբագիրն էր Կ. Խուդաբաշյանը: Մատենաշարի հրատարակման նախապատրաստման նպատակով Ժողովրդական երաժշտության բաժինը ձեռնամուխ եղավ ձայնադարանում պահպանվող ժողովրդական երաժշտության նմուշների քարտավորմանն ու անձնագրավորմանը: Ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, պետական պատվերի շրջանակներում, Կ. Խուդաբաշյանի խմբագրությամբ հրատարակվեցին մատենաշարի 12 հատորները: Շուտով լույս կտեսնի հերթական՝ 13-րդ հատորը, որն Արվեստի ինստիտուտն ու մատենաշարի գիտաստեղծագործական կոլեկտիվը նվիրել է Կ. Խուդաբաշյանի հիշատակին:

Արվեստի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ պետական պատվերով 2011 թ. լույս է տեսել Կ. Խուդաբաշյանի «Армянская музыка в аспекте сравнительного музыкознания» *մենագրությունը: Սա հայ ժողովրդական, ժողովրդապրոֆեսիոնալ և կոմպոզիտորական երաժշտության պատմատեսական հետազոտություն է, որը շարադրվել է մշակույթի ներազգային ու միջազգային կոմպոնենտների (բանաստեղծական և երաժշտական տեքստեր, գրական և պատմական աղբյուրներ, առասպելաբանություն, կրոն, ծեսեր և այլն) բաղադրական քննությամբ:*

Հայրենիքը բարձր է գնահատել Կ. Խուդաբաշյանի ծառայությունները: 2011-ին նրան շնորհվել է ՀՀ արվեստի վաստակավոր գործչի պատվավոր կոչում: Իսկ մինչ այդ՝ 2008-ին, նա պարգևատրվել է մեր Ակադեմիայի բարձրագույն պարգևով՝ ՀՀ ԳԱԱ վաստակագրով:

Կենսախինդ ու հմայիչ, բարի ու ազնիվ մարդու, գիտության նվիրյալի լուսավոր կերպարը հավերժ վառ կմնա նրան ճանաչողների սրտերում:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ